Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6788

327·3
U-39

1904.

2010

ՔՈՒՄԱՍՈՏ. ՍՈՑ.-ԴԵՄ. ԲԵՆԻՈՐ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ.

Պրոլետարներ բոլոր երկրների, միացէք!

(82)

ՊՐՕԼԵՏԱՐԱԿԱՆ ՏՕՆԸ

Լ. ՄԱՐՏՈՎԻ.

Հրատարակութիւն
Ռ. Ս.-Դ. Բ. Կ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷՏԻ.

327.3
Մ-39

2001

Ցպարան Տեղեկագրական Կոմիտէի
1904

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՏՈՆԸ.

327.3
Ս-39
49846-ահ

Ինչպէս ծագեց մայիսեան տօնը?

1889 թուին Պարիզում կայացաւ ամբողջ աշխարհիս բանուորական կուսակցութիւնների ներկայացուցիչների համագումարը (կոնգրէսը)։ Այդ համագումարում բանուորները դատում էին ամբողջ աշխարհիս գործաւորների իրենց շահերը պաշտպանելու համար մղած կռուի միջոցների մասին։ Այդ կռուի տասնեակ տարիների փորձը զանազան երկրների բանուորներին համոզեց, որ այն բոլոր թշուառութիւնները, որոնցից նոքա տուժում են և տանջւում՝ կանգնեցնելու լոկ այն ժամանակ, երբ արտադրութեան միջոցները (հողը, երկաթուղիները, հանքերը, մէքենաները, գործարանները) մասնաւորանձանց ձեռքից կանցնեն համախմբուած, միացած բանուորների ձեռքը, ամբողջ հասարակութեան ձեռքը, և երբ մարդկանց բոլոր անհրաժեշտ պիտոյքների արտադրութիւնը կկատարուէ հասարակութեամբ հէնց իրեն, հասարակութեան օգտին և ոչ թէ կապիտալիստների գրպանները լցնելու համար։ Սոցիալիզմի մտցնելը — միակ միջոցն է վերջ դնելու մարդկութեան ժամանակակից բոլոր թշուառութիւններին, որոնց պատճառն է աշխատանքի կապիտալից շահագործումը։ Մի քանիսի չափազանց հարստութիւնը, միւսների չափազանց չքաւորութիւնը, մի քանի հազարների դատարկապորտութիւնը և միլիոնաւորների, հոգին ու մարմինը բպանող ոյժից վերջ աշխատանքը, չքաւորութեան առաջացրած ագիտութիւնը, հարբեցողութիւնը և

38014 3071
8854
Մ. Ա. Մասիսյան
35465-66

ուրիշ արատները, անգործութիւնը վաղահաս մահերով և սովից հիւանդութիւններ, կարիքից ստիպուած անառակութիւններ, զրկանքից առաջացած յանցանքներ, մարդկանց անհաւասարութիւնը և թագաւորութիւնն ոյժի արդարութեան վրայ, ստի՝ ճշմարտութեան վրայ— այս բոլոր հասարակական թշուառութիւնները կանյայտանան լոկ այն ժամանակ, երբ ահագին հարստութիւնները, մարդկային աշխատանքով և ճարտարութեամբ ստեղծուած, կը դադարեն ծառայել սակաւաթիւ կապիտալիստներին իբր միջոց միլիոնաւոր աշխատաւորներին ճնշելու, հարստահարելու և շահագործելու համար. երբ այդ հարստութիւնները կպատկանեն ամբողջ ժողովրդին և կգործադրուեն արտադրութեան մէջ բոլորի օգտին, երբ ժողովուրդը իր ձեռքում կունենայ իւր աշխատանքի պտուղները, ներկայումս տրուող նոցա, որոնք անձամբ իրենք չեն աշխատում։

Սոցիալիզմ—ահա նպատակը բանուորական շարժման, որը ընդգրկում է միլիոնաւոր կազմակերպուած բանուորների, աշխարհիս բոլոր ծայրերում։

Որպէս զի սոցիալիստական կարգ ձեռք բերել, ամեն մի երկրի բանուորները պէտք է միանան մեկ սոցիալիստական քաղաքական կուսակցութեան եւ ձգտեն պետական իշխանութիւնն այդ կուսակցութեան ձեռքն ձգել ժողովրդի ներկայ կառավարիչներից, որոնք կապիտալիստների և կալուածատէրերի ծառաներն են։ Ֆիրանալով պետական (քաղաքական) իշխանութեան՝ բանուորական դասակարգը կիրականացնէ բոլոր հասարակական հարստութիւնների ժողովրդի ձեռք անցնելը և կը կազմակերպէ մեկ ընդհանուր ծրագրով հասարակական (սոցիալիստական) արտադրութիւն, կառավարող ժողովրդի ընտրած ներկայացուցիչներով և բաւարարացնող՝ բո-

լորի կարիքները առանց մարդը մարդով շահագործման։ Այդ յեղաշրջումը (յեղափոխութիւնը), որը վերջ կդնի մարդկային չքաւորութեանն և շահագործման՝ բանուոր դասակարգը անկարող կլինի գլուխ բերել, եթէ նաւաճած չլինի քաղաքական իշխանութիւնը, որը ներկայումս գտնուում է կապիտալիստների ձեռքում՝ բիրտ ոյժով պաշտպանում է նոցա շահերը և միմիայն ոյժով կարելի կլինի կորզել կապիտալիստների ճանկերից նոցա յափշտակած հասարակական հարստութիւնները։ Ներկայ պետութիւնը օրէնքներ է հրատարակում, որոնք բանուորների աշխատանքով գոյացած կապիտալիստների սեփականութիւնը սրբազան են յայտարարում և խրատիւ պատժում այդ հարստութիւնները ժողովրդին վերադառնելու ամեն մի փորձ։ Բանուորական դասակարգը սոցիալիստական յեղափոխութիւնը կարող իրականացնել միմիայն պետական իշխանութիւնը իր ձեռքն ձգելով։

1899 թւի Պարիզի համագումարը հաստատեց գիտակից բանուորների որոշումը— միացեալ ոյժերով կուռել սոցիալիստական կազմի իրականացնելու նպատակով կառավարչական իշխանութիւնները իրենց ձեռքը ձգելու համար։

Բայց Պարիզի համագումարը չբաւականացաւ միայն բանուորական շարժման վերջնական նպատակի ձևակերպմամբ։ Նա որոշեց նոյնպէս, թէ հէնց այժմս որպիսի բարելաւումներ պէտք է կեանքում մտցնուեն, որպէս զի բանուոր դասակարգը կարողանար աւելի յաջողութեամբ մաքառել յանուն սոցիալիզմի և պաշտպանել իրեն, ներկայ կապիտալիստական կարգերում սպառնացող լիակատար չքաւորութիւնից։ Այդպիսի բարելաւումները (ռեֆորմներ) պէտք է 2 տեսակի լինեն.— 1. քաղաքական, որոնք լայնաց-

նում են բանւոր դասի ազատութիւնը և մեծացնում նրա իրաւունքները, որոնք նրան անհրաժեշտ են կազմակերպելու և թշնամիների դէմ յաջող մաքառելու համար և 2. տնտեսական բարեփոխութիւններ՝ որոնց նպատակն է բարելաւել բանւորի կեանքի և աշխատանքի պայմանները, նամանաւանդ նոցանից ամենաթոյլերինը՝—կանանց և մանկանց։ Այդ՝ գործարանական օրէնքներն են, օրէնքները տէրերի պատասխանատուութեան մասին դժբաղդ դէպքերի, հիւանդանոցային կանոնների և աշխատանքի ընդունակութիւններ կորցրածների թոշակների մասին։

Այս բոլոր քաղաքական և տնտեսական բարելաւումներից Պարիզի համագումարը առանձնապէս ընդգծեց երկու գլխաւորները, որոնք կարող են իրականանալ միմիայն ամբողջ աշխարհի միացեալ ջանքերով։ Այդ երկու բարելաւումներն են ութ ժամեայ բանւորական օրը եւ մշտական զորքի ոչնչացումն։ Համագումարը որոշեց, որ ամեն տարի, մայիսի մէկին բոլոր երկրների կազմակերպուած բանւորները իրենց կառավարութիւններին ներկայացնելու են այդ երկու պահանջները։ Մայիսեան գործադուլը և մայիսեան ցոյցերը— բացարձակ ժողովների և հրապարակային ընթացքների ձևով— պէտք է իրը միջոց ծառայեն յիշեցնելու կառավարութիւններին բանւոր դասի կարիքների մասին և ցոյց տան, որ բոլոր երկրների բանւորները միացել են, և որ նոքա բոլորը, առանց ազգութեան և դաւանանքի խտրութեան, մէկ ընդհանուր մեծ նպատակ ունեն—ազատել աշխատանքը շահագործումից և երկրիս վրա տարածել թագաւորութիւնը սոցիալիզմի՝ ազատութեան և հաւասարութեան։

Այն ժամանակից սկսած մայիսի մէկի օրը դառաւ

համաշխարհային ցոյցի օր միլիոնաւոր աշխատաւոր մարդկանց, օր՝ յիշեցնող շահագործողների աշխարհին որ քաղցածների աշխարհը, աշխատաւորների աշխարհը ոտքի է կանգնել իր իրաւունքների համար և ահեղ ու անշեղ կերպով յառաջ է շարժւում դէպ իր ազատութիւնը։ Ու մայիսի մէկի ամեն մի նոր տօնումը նոր ապացոյցներ է տալիս կազմակերպուած բանւորական դասի քանակի և հզօրութեան աճման մասին. ամեն տարի մայիսեան տօնին միանում են բանւորների նոր խմբեր, նոր ու նոր վայրերում հնչւում մեր մարտական կոչը.— "Պրոլետարներ բոլոր երկրների՝ միացէք! Կեցցէ սոցիալական յեղափոխութիւնը!„:

ՈՒԹ ԺԱՄԵԱՅ ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՕՐՈՒԱՅ ՆՊԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ.

Այն ժամանակից սկսած, երբ բանւորները սկսեցին մտածել իրենց վիճակի մասին և նրանից ելք պտրել՝ նոքա սկսեցին պահանջել բանւորական օրւայ կրճատումն։ Գործադուլներով և կառավարութիւններից կորզած օրէնքներով զանազան երկրների բանւորները ձեռք բերին աշխատաժամերի սահմանափակումն օրւայ ընթացքում որոշ ժամերով, շատ թէ քիչ չափով գիշերւայ աշխատանքի արգելումով։ Բանւորական օրւայ այդպիսի ամեն մի սահմանափակումից առաջ գործարանատէրերը և նոցա գիտնական համախոհները ամեն եղանակով աղաղակում էին, որ բանւորական օրւան կրճատումը, հէնց թէկուզ մի ժամով, համահաւասար է «մահւան դատապարտել արդիւնաբերութեանը», կնշանակէ քայքայել տէրերին և հէնց դրանով բանւորներին առանց մի կտոր հացի թողնել։ Բայց, երբ

վերջ ի վերջոյ բանուորներին յաջողւում էր ջախջախել կապիտալիստների յամառ ընդիմադրութիւնը և ընդունել տալ բանուորական օրայ կարճացումը, ապա միշտ յայտնւում էր, որ գործարանատէրը ոչ մի իրական վնաս չեն կրում։ Այն ինչ նոքա կորցնում են բանուորական կարճացումից՝ լրացնում են զանազան միջոցներով։ Նոքա մտցնում են նոր, կատարելագործւած մէքենաներ և յարմարացումներ և—հատավճառների կամ "տոկոսի" միջոցով—հասնում են նրան՝ որ բանուորը աւելի կարճ ժամանակում մշակում էր նոյնքան արգասիք, որքան և առաջ։ Այդպիսով, կապիտալը իր օգտին կարողացաւ օգտւել և այն աւելի մեծ աշխատանդունակութիւնից, որը բանուորը ստանում է իր տանջանքների ժամերի կրճատումից։ Այդ իսկ պատճառով բանուորական օրայ ամեն մի կրճատումն վերջի վերջոյ բանուորներին կրկին բերում է նոյն հարցին. պահանջել բանուորական օրան նոր, առաւել ևս կրճատումն, որպէս զի գոնէ փոքր ի շատէ սահմանակել աւելի ու աւելի աճող կապիտալիստական շահագործումն։

Իսկ այդ շահագործումը աւելի ու աւելի աճում է ըստ այն չափի, որքան որ մտցնւում է նոր մէքենաներ, փողոց շպրտող բանուորների մի մասը, ըստ այն չափի, որքան որ գործարանի մրցման չը դիմանալով արհեստաւորները և տնայնագործները քայքայւում են, ըստ այն չափի, որքան որ հարկերը և տուրքերը, վաշխառւական կաշկանդումները և երկրագործութեան մէջ մտցնւող մէքենաները գիւղացիներին խաղաղ դաշտերից քշում են քաղաք աշխատանքի։ Անգործների այդ բոլոր ամբոխները կապիտալիստներին հնարաւորութիւն են տալի բանուորների շահագործումը աւելի ու աւելի խստացնել։

Միայն շնորհիւ բանուորական օրան կարճացման համար մղտական մղւող կռւին, բանուորները վերջնականապէս ճնշւած չեն աւելի ու աւելի ծաւալւող կապիտալիստական արտադրութեամբ, որը ամեն մի տէխնիքական նոր գիւտով, ամեն մի նոր կատարելագործւած մէքենայով նոր ու նոր միջոցներ է տալիս "իր փողով" բանուորներից քամել բոլոր կենսական հիւթերը։

Բանուորական օրան համար կռիւը կռիւ է ընդդէմ անընդհատ ուժեղացող շահագործման, դէպ որն է տանում խոշոր արտադրութեան զարգացումը։ Այս կռիւը վերջանալուէ միայն այն կարգերի ոչնչացմամբ, որոնք մարդկութեանը բաժանում են շահագործողների և շահագործւողների. միմիայն այն ժամանակ, երբ արտադրութեան միջոցները ժողովրդի ձեռքն կանցնեն։ Այդ դէպքում լոկ տէխնիքական ամեն մի կատարելագործումն, հարստութեան ամեն մի աճումն կնւազեցնէ և ոչ թէ կուժեղացնէ բանուորին սղմող աշխատանքի ծանրութիւնը։

Այժմս, երբ բոլոր յառաջաւոր երկրներում բանուորների մեծագոյն մասի համար աշխատանքը կրճատւած է մինչ 10—11 ժամի օրեկան, ամբողջ աշխարհի բանուորները պահանջում են ամենուրէք մտցնել 8 ժամեայ բանուորական օր։

Ռուսաստանում, որտեղ 1897 թւի յունիսի 2-ի օրէնքով բանուորական օրը որոշւած է $11^1/_2$ ժամ, բայց շնորհիւ մինիստրական շրջաբերականների և գործարանական վերատեսչութեան զանազան խարդաւանանքների, բանուորների մեծագոյն մասը աւելի է աշխատում,—Ռուսաստանում 8 ժամեայ օրան պահանջը առանձին նշանակութիւն ունի, նրա ընդունելը ռուսական պրոլետարիատին հնարաւորութիւն կտար ուղղել իր մէջքը, կորացած տէրե-

րի անսահման շահագործման ծանրութեան տակ։

Ութ ժամ աշխատանք,— 8 ժամ քուն— 8 ժամ հանգիստ։ Այսպիսի պահանջ ներկայացրին Ռուսաստանի հարաւի (նոյնպէս և Կովկասի) երկաթուղային և գործարանական բանւորները 1903 թւի ամառւայ ընդհանուր գործադուլի ժամանակ։

Ութ ժամեայ բանւորական օրւայ ժամանակ բանւորը հնարաւորութիւն կստանայ մտաւորապէս զարգանալու։ Երկար բանւորական օրը ժամանակ չէ թողնում, սպանում է ամեն մի եռանդ և կազմակերպութեան գործին իր ոյժերը նւիրելու ամեն մի հնարաւորութիւն։ Բանւորը այն ժամանակ է միայն իրեն մարդ զգում, բառիս բուն նշանակութեամբ, երբ հեռանում է գործարանից։ Այդ իսկ պատճառով բանւորական կարճ օրւայ համար մղւած կռիւը յայտնւում է կռիւ բանւորի կեանքի մարդավայել կեանքի։

Ութ ժամեայ բանւորական օր մտցնելն գործարանատէրերից կպահանջէ նոր, աւելնորդ բանւորների վարձումն։ Կքչանայ անգործութիւնը, յետեւապէս և հեշտ կլինի աշխատավարձի աւելացումն։ Ամեն ոք գիտէ, որ աշխատավարձի աւելացման համար մղւող կռւին շատ մնասում են անգործները, որոնք իջեցնում են աշխատանքի գինը։

Ութ ժամեայ բանւորական օրւայ մտցնելը նշանակում է գործարաններում տեղի ունեցող թշւառ դէպքերի պակասումն։ Գիտութիւնը ապացուցել է, որ թշւառ դէպքերի մեծագոյն մասը, մէքենաների մօտ, առհասարակ տեղի են ունենում աշխատանքի վերջին ժամերին, երբ չափազանց աշխատանքը բանւորին ուժասպառ է անում և բթացնում։

Կարճ բանւորական օրւայ համար մղւած կռւում բանւորները տէրերի կողմից հանդիպում են յետեւեալ հակաճառութեան.— մենք ուրախ ենք կարճացնել բանւորական օրը, բայց անկարող ենք այդ անել, քանի որ հարևան երկրներում դեռ ևս աշխատում են աւելի. այլ կերպ մեր մրցակից օտար երկրացիներին հնարաւոր կլինի արտադրելով ապրանքները աւելի էժան՝ ծախել նոցա մեզանից պակաս գնով, քան մենք։

Ակնյայտնի է, որ բանւորական օրւան կարճացման դէմ յարուցած այդ հակաճառութիւնը կորցնում է ամեն մի նշանակութիւն, եթէ բոլոր երկրների բանւորները միատեսակ պահանջում են բանւորական օրւան կրճատումը մինչ 8 ժամը։

Եւ իր մօտաւոր պահանջներում, ինչպէս և իր վերջնական նպատակում, ամեն մի երկրի բանւոր դասակարգը ստիպւած է, եթէ ուզում է որ և է բան ձեռք բերել, գործել համամիտ, համերաշխ բոլոր երկրների բանւորների հետ։

ՄՇՏԱԿԱՆ ԶՈՐՔԻ ՈՉՆՉԱՑՈՒՄՆ.

Միւս պահանջը, որ մայիսի 1ին բոլոր երկրների բանւորները յառաջադրում են՝ խոշոր քաղաքական ռեֆորմներին է վերաբերում։ Դա՝—մշտական զորքի ոչնչացնելու և նրա տեղ ընդհանուր ժողովրդի զինման (միլիցիա) պահանջն է։

Մշտական զորք պահելու համար իւրանչիւր պետութիւն ամեն տարի ծախսում է մի քանի հարիւր միլիոն ռուբլի (Ռուսաստանը ծախսում է մօտ 400 միլ. ռուբ.)։ Այդ միլիոնները ստացւում են ազգաբնակութեան ամենաչքաւոր մասի— բանւորների և գիւղացիների հարկերից և տուրքերից։ Որպէս զի ձեռք բերել այդ ահագին գումարները, պետութիւնը ակցիզ է մտցնում ծխախոտի, լուցկու, օղի,

գարեջրի, նաւթի, շաքարի վրայ և դրանով թանգացնում է գործածութեան այդ անհրաժեշտ այդ առարկաները, նա մաքս է վերցնում թէյից, նա գիւղացուն ստիպում է ահագին տուրք վճառել իր մի թիզ հողի համար, որը նոյն իսկ չէ կերակրում նրա ընտանիքին. նա պատէնտ է պահանջում որևէ առևտրի կամ արդիւնագործութեան իրաւունքի համար և այդ պատէնտը այքան ճնշիչ է, որքան որ չքաւոր է առևտրականը կամ արդիւնագործը: Մշտական զօրքը—սա է գլխաւոր պատճառը աւելի ու աւելի աճող հարկերի, քայքայող մանր խազէյնին և բանւորից խլող այն աւելնորդ լուրլին, որը նա ձեռք է բերել կապիտալիստի հետ կռւելով:

Որովհետև զօրքի վրա ծախսը օրէ օր աճում է, բոլոր պէտութիւններում: Պէտութիւնները իրար հետ մրցում են զինւորների սպառազինմամբ և զինւորակոչութեան են կոչում հազարաւոր նոր պատանիներ՝ նոցանից ամեն մէկը ճգնում է զինւորների քանակով և նոցա սպառազինմամբ միւսների առաջն կտրել, որպէս զի միշտ պատրաստ լինի պատերազմի:

Իսկ ումն է հարկաւոր այդ պատերազմները, որոնց վրայ ամեն տարի ծախսւում են հարիւրաւոր միլիոներ և որոնց ժամանակ սպանւում են և հաշմանդամ դառնում հարիւր հազարաւոր մարդիկ?

Տէրտէրները և կառավարիչները ժողովրդին ասում են, որ պատերազմները հարկաւոր են հայրենիքը պաշտպանելու ագահ և լիրբ թշնամիներից պաշտպանելու համար: Բայց չէ՞ որ, եթէ այդ ասում են ռուսական ժողովրդին, օրինակ, գերմանացիների վերաբերմամբ, ապա և հակառակը, գերմանական ժողովրդին ներշնչում են, որ պատերազմը հարկաւոր է գերմանական ժողովրդին ագահ և յանդուգն ռուսներից պաշտպանելու համար: Այդ միևնոյնն կրկնում են անգղիացիներին, ֆրանսիացիներին և այլոց նրանց տէրտէրներն ու պէտերը: Եւ բոլորն էլ միատեսակ ասում են: Ոչ մի աշխատաւոր ժողովուրդ չէ կամենում յարձակւել իր հարեւանի վրա, նրան վնասելու և նրա հողը խլելու համար: Ժողովուրդը շատ լաւ հասկանում է թէ հէնց իր համար ինչ թշւառութիւններ է բերում պատերազմը, որպէս զի նրան ձգտէ: Եթէ պատերազմը իսկապէս տեղի է ունենում, ապա լոկ այն պատճառով, որ որպէտերը և հարուստ դասակարգները իրենց շահերի համար շահագործող ժողովրդին գռգռում են և պատերազմ սկսում:

Պատերազմի միջոցով իւրաքանչիւր երկրի կապիտալիստները մտածում են ձեռք բերել նոր երկիրներ, որտեղ նոքա, իրենց կառավարութիւնների հովանաւորութեան տակ օգուտներ կծծեն «միացած» գիւղացիներից և բանւորներից: Այսպէս՝ վերջին Չինական պատերազմից յետոյ (1900 թ.) ռուսական զօրքով վերցւած Մանջուրիայում իսկոյն սկսւեցին և երկաթուղիներ և զանազան արևտրաարդիւնաբերական ձեռնարկութիւններ, հարստացնող ռուսականվաճառականներին: Նոր նւաճած երկրներում կապիտալիստները ենթադրում են գրտնել ազատ շուկաներ, ձեռնտու կերպով իրենց ապրանքները սաղացնելու համար: Եւ ահա, որպէսզի այդ կապիտալիստների շահերը պաշտպանւի, այժմս ստիպւած ենք նոր պատերազմ մղել եապոնացիների դէմ, որը նոյնպէս ճգնում է այդ միևնոյն երկիրը, այդ միևնոյն օգուտները ձեռք բերել իր կապիտալիստների համար:

Կառավարութիւնները, իրենց հերթում, ձգտում են նոր, հազարաւոր հպատակներ ձեռք բերել, որովհետև, որքան շատ են հպատակներ, նոյնքան

շատ է կառավարութեան ձեռքում փող և զինուոր, հենց դրանով նա աւելի ուժեղ է իր սեփական ժողովրդի դէմ մղուող կռուում, երբ նա պահանջում է իրաւունքներ և կեանքի լաւագոյն պայմաններ: Պահպանուող ժողովրդի հաշուով և բաղկացած ժողովրդի զաւակներից, զօրքը ծառայում է կառավարութեանը և կապիտալիստներին, հենց այդ ժողովրդի դէմ կռուելու համար: Զինուորները ուղարկուում են գիւղացիների դէմ, երբ նոքա չեն վճառում ուժից վեր հարկերը կամ երբ ապստամբուում են իրենց կեղեքիչ-կալուածատէրերի դէմ, ինչպէս այդ տեղի ունեցաւ 1902 թուին Պոլտաւի, Խարկովի, Սարատովի Քուրսկի և այլ նահանգներում: Զինուորներին ուղարկում են խաղաղացնելու բանուորներին, երբ նոքա կայացնում են խոշոր գործադուլներ, սուիններով և գնդակներով ստիպում են նոցա խոնարհուել գիշատիչ-գործարանատէրերի կամքի առաջ: 1902 թուին "քրիստոսասէր զօրականութիւնը" հրացանաղարկ արեց բանուորներին Բաթումում (մարտի 9), Ռոստովում (նոյեմ. 11), Տիխորեցկում (նոյեմբ. 17) և հենց այդ միևնոյն զօրականութիւնը սուիններով, մարտկներով և գնդակներով խաղաղացրել է բանուորներին Զլատկինսկի գործարանում (Վեստ կայի նահ.) 1902 թ: մարտին: 1903 թուին հենց այդպիսի հրացանաձգութիւն տեղի ունեցաւ Նիկոլայևում, Կիևում (2 անգամ), Եկատերինոսլաւում, Զլատօուստում, Թիֆլիսում. Միխայլովում, ընդ որում սպանուածների և վիրաւորուածների ընդհանուր թիւը հարիւրից աւելի է: Վերջապէս զինուորները ծառայում են քաղաքական ցոյցերը ցրելու, երբ բանուորները և ազգաբնակութեան այլ դասակարգերը պահանջում են կառավարութիւնից ազատութիւն և իրաւունքներ: Այդպէս տեղի ունեցաւ

1902 թուի փետրուարի 2-ին Կիէվում և յետոյ մի շարք քաղաքներում — Օդեսայում, Պետերբուրգում, Սասատովում, Նիժնի-Նովգորոդում և այլն, իսկ անցեալ 1903 թուին և Կովկասի մի քանի քաղաքներում: Քանի քանի անգամ բանուորները վերջ են տուել յաջող սկսած գործադուլներին, երկիւղալով "կարգ ու կանոն և անդորրութիւն պահպանելու" համար ուղարկուած զինուորներից և կազակներից:

Որպէս զի ներկայ զօրքը կառավարութեանն ծառայէ իր ժողովրդի հետ մղած կռուում — դրա համար զինուորը ուղարկուում է ըստ հնարաւորութեան հեռու, հայրենիքից դուրս ծառայելու, դրա համար էլ նոքա կազարմաներում դուրս են կանգնացուում բուունցքներով և զինուորական դատարանի ու դիսցիպլինարնի բատալիոնների երկիւղով: Որպէս զի բանուորը համաձայնուի, ըստ իշխանութեան պահանջի ջարդել և կոտորել հենց իրենց նման բանուոր մարդկանց — դրա համար նոքա ընտանիքից զրկուում են 4 տարով և վերածուում վարժուած գազանի:

Պահանջելով մշտական զօրքի ոչնչացումն, մենք ձգտում ենք, որ կապիտալիստները և կառավարութիւնը հնարաւորութիւն չունենան զինուած ոյժով ժողովրդին ճնշելու, երբ նա մաքառում է յանուն ազատութեան և արդարութեան, երբ նա կռուում է լաւագոյն կեանքի համար:

Հայրենիքը արտաքին թշնամուց պաշտպանելու համար, եթէ նա կդիտաւորուէ յարձակուել, լի՛ վին բաւական է ժողովրդական սպառազինումն (միլիցիա), այսինքն՝ վարժեցնել բոլոր երիտասարդներին զինուորական գործին և սպառազինել բոլոր ժողովրդին այնպէս, որ սպառնացող վտանգի հենց առաջին դէպքում հնարաւոր լինի բաւականաչափ զօրք հաւաքել: Այդպիսի զինումն կատարեցի՛ բօէրները

անգլիացիների դէմ մղած կռւում և այդ պատերազմը ցոյց տւեց, որ ժողովրդական միլիցիան յաջողութեամբ կարող է պաշտպանել երկիրը։

Բանւորը, որը դեռ երեկ աշխատում էր գործարանում և վաղն էլ աշխատելու է՝ այսօր հրացան չի պարպի իր եղբայր-բանւորների վրայ։ Եւ ժողովրդական օպոլչենիան, պիտանի հայրենիքը պաշտպանելու համար, պիտանի չի լինի բանւորական շարժումը„ զսպելու համար։

Այդ իսկ պատճառով ժողովրդական ընդհանուր զինւորման մասին լսել անգամ չեն ցանկանում կապիտալիստները ու կառավարութիւնները։

Եւ հենց այդ իսկ պատճառով մենք, սոցիալեմոկրատներս պահանջում ենք այդ։ Մենք պահանջում ենք մշտական զօրքի ոչնչացումն նրա փոխարինումն, հարկային ծանրութեան թեթևացման շահի տեսակէտից, ընդհանուր խաղաղութեան, ժողովրդական ազատութեան շահերի տեսակէտից ընդհանուր *ժողովրդական զինւորմամբ* (միլիցիա)։

Ինչպէս 8 ժամեայ բանւորական օրւան պահանջը, նոյնպէս և մշտական զօրքի ոչնչացման և նրա փոխարէն ընդհանուր զինման ընդունելու պահանջը կարելի է իրականացնել միմիայն միաժամանակ բոլոր պետութիւններում, որովհետև առանձին մի որ և է պետութիւն չի համաձայնւի զինաթափւել երկիւղ կրելով, որ դրանով կօգտւեն թշնամիները և կարշաւեն նրա վրայ։

ՄԱՅԻՍԵԱՆ ՏՕՆԸ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՏՐԿՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՒՄ.

Մայիսեան տօնի հաստատւելուց անմիջապէս յետոյ զանազան երկրների բանւորները սկսեցին օգտ-

ւել այդ օրով կռւելու իրենց քաղաքական իրաւունքները լայնացնելու համար։

Պարլամենտարիզմով* կառավարւող մի քանի երկրներում բանւոր դասակարգը բաւականի ազդեցու-

*) Պարլամենտ կոչւում է ժողովրդի ընտրած ներկայացուցիչների (պատգամաւորների--դէպուտատների) խորհուրդը։ Պարլամենտը քննում է և մշակում օրէնքները, որոշում է հարկերը և պետական ծախսերը և հսկում կառավարութեան — մինիստրների գործունէութեանը, որոնք պատասխանատու են նոցա առաջ, այսինքն հաշիւ են տալիս իրենց գործունէութեան համար։ Ազատ (սահմանադրական) երկրներում մինիստրները պէտք է հրաժարական տան, եթէ պարլամենտի մեծամասնութիւնը դատապարտում է նոցա գործունէութիւնը։ Հարկաւոր է նկատել, որ ոչ բոլոր սահմանադրական երկրներում քաղաքական լիակատար ազատութիւն է տիրում, ոչ բոլոր պետութիւններում ժողովրդի կամքն է թագաւորում (դեմոկրատիա)։ Մի կողմից, ազգաբնակութեան չքաւոր մասերը սակաւ քաղաքական իրաւունքներով են օգտւում քան հարուստները (պատգամաւորների ընտրութիւնների ժամանակ), միւս կողմից—պարլամենտը չունի պետական լիակատար իշխանութիւն։ Առաջին չարիքը մինչև այժմս գոյութիւն ունի Բելգիայում, Հոլանդիայում, Աւստրիայում և այլ երկրներում, երկրորդը—առանձնապէս Գերմանիայում, որտեղ պարլամենտի (ռեյխստագի) ընդունած օրէնքը այն ժամանակ է միմիայն ոյժ ստանում, երբ նրան հաստատում են ազքաները (Գերմանիան, ինչպէս յայտնի է, 26 անկախ պետութիւնների դաշնակցական կայսրութիւնն է). այստեղ բացի այդ, մինիստրները նշանակւում են պետերից և կարող են իրենց պաշտօնում մնալ հակառակ պարլամենտի կամքի։ Չնայած ինքնակալութեան այդ բոլոր մնացորդներին, Գերմանական ժողովուրդը— համեմատաբար Ռուսաստանի հետ— բաւականի քաղաքական ազատութիւն ունի։ Այդպիսի երկրներում, ինչպիսին է Գերմանիան, սահմանադրական կիսով չափ, բանւորական կուսակցութիւնները պահանջում են յետեւողական դեմոկրատիական ազատութեան մտցնումը, ժողովրդի կամքի, յանձին նրա ընտրեալ և պատասխանատու նրա առաջ, իշխանութիւնը և լիակատար քաղաքական հաւասարութիւն։

թիւն չունի պետական գործերի վրայ, որովհետև պատգամաւոր ընտրելու իրաւունքը պատկանում է ոչ բոլոր քաղաքացիներին, այլ միայն որոշ քանակութեան հարկեր վճառող հարուստներին։ Այդպիսի երկրներում բանւոր դասակարգը ձգտում է նախ և առաջ ձեռք բերել բոլորի համար հաւասար ընտրողական իրաւունք։ Այսպէս, Աւստրիական և Բէլգիական բանւորները, զրկուած լինելով ընտրողական իրաւունքներից, մայիսի մէկով սկսեցին օգտուել ցոյցեր և գործադուլներ կազմելով պահանջելով ընդհանուր ընտրողական իրաւունք։ Ցամաքուով նոցա յաջողուեց մասամբ հասնել իրենց նպատակին։ Այդ երկու երկրների բանւորները այժմս մասնակցում են պատգամաւորների ընտրութեանց, թէև ոչ հաւասար կերպով ոչ-բանւորների հետ։ Եւ այժմս, թէ Աւստրիական և թէ Բէլգիական բանւորների ներկայացուցիչները—սոցիալիստները մասնակցում են պարլամենտներում և պաշտպանում իրենց ուղարկողների շահերը։ Շուէդական բանւորներ նոյնպէս օգտւում են մայիսի մէկով ընդհանուր ընտրողական իրաւունք պահանջելու համար։

Բայց, եթէ յիշած երկրներում բանւորները դեռ ևս չունեն բոլոր քաղաքական իրաւունքները, ապա մեզ մօտ, Ռուսաստանում, բանւորները բոլոր ազգաբնակութեան հետ միասին բոլորովին զրկուած են ամեն մի քաղաքական իրաւունքներից։ Բոլոր ժողովրդի հետ միասին Ռուսաստանի բանւորները իրաւազուրկ ստրուկներն են ռուսական կառավարութեան, իսկ բանւորները այդ բազմամիլիոն ստրուկներից ամենաիրաւազուրկներն են։

Ռուսաստանի կառավարութիւնը ռուսական ցարի հետ միասին ոչ ոքի առաջ պատասխանատու չէ իր գործունէութեան համար։ Նա միւս պետութիւն-

ների հետ միութիւններ է կապում և պատերազմներ է յայտարարում, որը հարիւր հազարաւոր զոհեր է տանում, ժողովրդի համաձայնութիւնը չը ստանալով նա նրան ահագին հարկերի է ենթարկում և այդպիսով հաւաքած հարիւրաւոր միլիոնները վատնում իրեն հայեցողութեամբ. նա հրատարակում է օրէնքներ և ամեն տեսակ խիստ պատիժների ահով ստիպում ժողովրդին ենթարկուել այդ օրէնքներին, որի հրատարակման մէջ նա ոչ մի մասնակցութիւն չէ ընդունել. և ինքն էլ փոխում է այդ օրէնքները, երբ նոքա իրեն անյարմար են, երբ ժողովուրդը իր կառավարութեան դէմ մղած կուում կանգնում է այդ օրէնքների հովանաւորութեան տակ։ Եւ ինքն էլ, երբ և ինչպէս կամենում է, թքում է իր հրատարակած օրէնքների վրա և վարւում է իր ժողովրդի հետ առանց օրէնքի և օրէնքից դուրս, այսպէս կոչուած՝ „ադմինիստրատիւ միջոցներով“, այսինքն, ժանդարմի, ոստիկանի, չինովնիկի քմահաճոյքով։

Ցարի կառավարութիւնը անպատիժ կատարում է այնպիսի յանցանքներ, որոնց համար մասնաւոր անձնաւորութիւնը կենթարկուեր ամենածանր պատիժների— և այդ անում է նա իր կամ կապիտալիստների օգտին։ Նա խախտում է երդումն, որը ցարը տուեց Ֆինլանդական սահմանադրութեան պահպանման համար և մէկ մէկու յետևից խլում է նոցա բոլոր իրաւունքները, ոտնատակ տալիս բոլոր օրէնքները, իսկ երբ Ֆինլանդացիները դիմադրում են այդ անօրինութեան՝ նա նոցա քայքայում է տուգանքներով, ձերբակալում և աքսորում ազնիւ քաղաքացիներին։ Ցարի կառավարութիւնը գըբչի մէկ թափով՝ խլում է երկու միլիոն հայ ժողովրդից նրա եկեղեցական ստացուածքները և սեփ-

Լաբ 38014 3071

կանացնում, իսկ երբ հայերը դիմադրում են աւազակային այդ թալանին՝ կառավարութիւնը հրացանազարկ է անում նոցա: Ցարի կառավարութիւնը որպէս զի ժողովրդի ուշադրութիւնից սքողէ լաւագոյն վիճակի համար մղած կռիւը՝ սարքում է անզէն հրէական ժողովրդի արնահեղ սպանդանոցը, կոտորում նոցա տասնեակներով, դատի ենթարկելով նոյն իսկ ինքնապաշտպանուել յանդգնողներին:

Ցարի կառավարութիւնը առաջադրում է մեզ, ինչպէս ստրուկների, թէ ինչ ենք մենք կարդալու (եթէ միայն կարդալ ուզում ենք) և յայտարարում թէ ինչ մենք կարդալ չենք յանդգնելու, եթէ միայն չենք ուզում հալածանքի ենթարկուել: Նա մեզ արգելում է հաւաքուել մեր կարիքների համար խորհելու, նա արգելում է մեզ ընկերակցութիւններ և միութիւններ կազմել մեր շահերը պաշտպանելու համար. նա ցոյց է տալիս մեզ, թէ ինչ խոհեր կարող ենք ունենալ և ինչ մտքեր արգելւած է մեզ ունենալ (հէնց այդպէս էլ ասում են. «մտքերի անբալ եմտութիւն»):

Բայց, եթէ Ռուսաստանի բոլոր ժողովուրդները ցարի կառավարութեան ճորտերն են, ապա մենք— բանուորներս, ստրուկներից ամենավերջինն ենք, նոցանից ամենաիրաւազուրկները:

Ռուսաստանի բոլոր ժողովուրդները զրկւած են պետական կառավարութեան մասնակցելու իրաւունքից. բայց վաճառականները և տանտէրերը իրաւունք ունեն քաղաքների ինքնավարութիւններին*

*) Բացի այդ, Ռուսաստանի ներքին նահանգներում գոյութիւն ունեն զաւառական և նահանգական «զեմստվոներ», որոնք կազմւած են կալւածատէրերից և փոքր մասամբ գիւղացիների պատգամաւորներից. այդ զեմստվոների իրաւասութեանն ենթարկւում են լոկ տնտեսական գործերը և թէև վերջերս կառավարութիւնից խիստ հալածվում է, բայց եւ այնպէս դա հողատէրերի ինքնավարութիւնն է:

(քաղաքային դումաներին) մասնակցելու և թէև նահանգապետների ու մինիստրների ճիպոտի տակ, բայց և այնպէս նոքա օրէնքով թոյլատրած կազմակերպութիւն ունեն, որով հնարաւորութիւն ունեն խորհել իրենց տնտեսական գործերը. գործարանատէրերը և առևտրականները հրաւիրւում են կառավարչական մասնաժողովներին մասնակցելու, երբ քննւում է որևէ տնտեսական հարց (օրինակ երկաթուղիների տարիֆների, մաքսերի, գործարանական օրէնքների, բօրսայի կանոնադրութեան և այլ հարցերի մասին): Բժիշկները, տէխնիկները, փաստաբանները բոլորն էլ ունեն որևէ լեգալ (օրէնքով ճանաչւած) կազմակերպութիւններ իրենց շահերի մասին մտածելու համար, և թէև, կրկնում ենք, նոքա բոլորեքեան գտնւում են ամեն բանում խառնուող խիստ կամայական և բիրտ չինովնիկութեան հսկողութեան տակ, բայց և այնպէս նոքա, թէկուս մի որևէ բանում մի քիչ իրաւունք ունեն և կարող են նրա վրայ հիմնւել, մինչ այն ժամանակ, երբ կառավարութիւնը կմտածէ փոխել գոյութիւն ունեցող օրէնքները և զրկել նոցա այդ իրաւունքներից:

Նոյն իսկ մեր գիւղացիները— նոքա էլ ունեն համայնական ինքնավարութեան գոնէ ստէրը, գոնէ ստարշինաներ և դատաւորներ ընտրելու և հասարակութեան անունից միացեալ գործելու իրաւունքը:

Իսկ Ռուսաստանի բանւոր դասակարգը զրկւած է քաղաքական և հասարակական իրաւունքների նոյն իսկ ստէրից: Բանւորին նոյն իսկ արգելւում է համախմբւած գործել («сходомъ»), նոցա արգելւում է գործադուլները, այսինքն՝ ընդհանուր շահերի համար համաձայնուել, նոցա արգելւում է կազ-

մակերպւել ու նոցա անկարելի է, այդ իսկ պատճառով, օրինական կերպով հաւաքւել իրենց կարիքների մասին խորհելու. նոցա արգելում են, ըստ նոր օրէնքի, ընտրել ստարօստաներ (աւագ) իրենց արժանաւոր ընկերներին և ստիպւում են ընտրել խազէյների պնակալէզներին ու լրտեսներին, նոցա կարծիքը կառավարութիւնը չէ հարցնում, երբ մըշակւում է նոցա ամենակենսական հարցերի վերաբերեալ գործարանական օրէնքները, օրինակ 11½ժ. բանւորական օրւայ հարցի վերաբերմամբ. բանւորները, շնորհիւ կառավարչական գրաքննիչների, ոչ մի լեգալ լրագիր չունեն, որտեղ կարողանային պաշտպանել իրենց շահերը, իրենց գործը. նոքա ձայն չունեն ոչ մի ինքնավարական հաստատութեան մէջ։

Լիակատար իրաւազրկութիւն ամենակարող կառավարութեան առաջ՝— ահա Ռուսաստանի բանւորի վիճակը! Եւ մինչ որ շարունակւում է այս իրաւազրկութիւնը, ոչ մի խօսք չէ կարող լինել Ռուսաստանի բանւորի կեանքում որևէ նշմարելի բարելաւութեան համար! Նա չէ կարող բարձրացնել իր բարեկեցութեան մակերևոյթը, մինչև որ չունենայ **գործադուլների, ժողովների, միութիւնների ազատութիւն**, մինչև որ ընդհանուր ոյժերով գործելու ամեն մի փորձ քաղաքական յանցանք է համարւում և պատժւում ինչպէս ոճրագործութիւն։ Նա չէ կարող յուսաւորել իր մռայլ վիճակը, քանի որ դեռ ամեն մի ոստիկանական աստիճանաւոր կարող է նրան անօրէն կերպով թակել, խուզարկել, ձերբակալել կամ աքսորել, այսինքն, մինչ որ օրէնքը չէ պաշտպանում քաղաքացիների անձնաւորութիւնների և ընակարանների անձեռնմխելիութիւնը և քաղաքացիներին իրաւունք չէ տա-

լիս դատի ենթարկել օրէնք խախտող ամեն մի աստիճանաւորի։ Բանւորը անկարող է թեթևացնել իր վրայ ծանրացած բեռը, մինչ որ նա չունի ազատ մամուլ, որտեղ նա մերկացներ իր թշնամիներին և համերաշխ կռւի հրաւիրէր իր վիճակակից ընկերներին։ Բանւոր դասակարգը չէ կարող դուրս գալ չքաւորութիւնից, մինչև որ նա **իր ընտրեալների միջոցով չէ մասնակցում պետական կառավարութեան գործում**, չէ ազդում օրէնքների մշակման, հարկերի բաժանման և պետական միջոցների ծախսման մէջ։

Կռիւ, անձնուրաց կռիւ յանուն քաղաքական ազատութեան և քաղաքական իրաւունքների—սա Ռուսաստանի բանւորների առաջին խնդիրն է։ Եւ նոքա արդէն սկսել են այդ կռիւը։ Ուսանողների և կամայականութեան դէմ ապստամբած միւս քաղաքացիների հետ Պետերբուրգի, Մոսկւայի, Կիևի, Խարկովի, Տագանրոգի, Նիժատերինոսլաւլի, Օդեսայի, Ն.-Նովգորոդի, Ռոստովի, Սարատովի, Վիլնոյի, Նիկոլայևի, Թիֆլիսի, Բագւի, Բաթումի, Տոմսկի, Տուլայի և շատ ուրիշ վայրերի փողոցներում բազմիցս նոքա յայտարարել են, որ այլ ևս չեն ցանկանում քաղաքականապէս ստրուկ լինել, որ նոքա պահանջում են իրենց համար այն քաղաքական իրաւունքները, որոնց օտար երկրների քաղաքացիները վաղուց արդէն ունեն։ «Կորչի ինքնակալութիւնը! Կեցցէ քաղաքական ազատութիւնը!» կոչը այժմս հնչում է ամեն ուրէք, որտեղ գործարանական կեանքը եռում է, որտեղ բանւոր դասը ոտքի է կանգնել կապիտալիզմի դէմ կռւելու։

Մայիսի մէկին, համաշխարային տօնի այդ օրը մենք պէտք է 8 ժամեայ բանւորական օրւայ և մշտական զօրքի ոչնչացման պահանջի հետ միասին

առաջադրենք **քաղաքական ազատութեան պահանջը**, որը Ռուսաստանի ժողովրդին կմոցնի ազատ կերպով իրենց կռիւը մղողների ընտանիքը, Եւրոպական և Ամերիկական ժողովրդների ընտանիքը:

ՄԱՅԻՍԵԱՆ ՏՕՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ.

1889 թւի Պարիզի բանւորական համագումարին Ռուսաստանի բանւորները, ինչպէս համախմբւած մի կազմակերպութիւն, իրենց ներկայացուցիչը չունէին: Միայն Հէհական բանւորները, կապւած Ռուսաստանի միւս ազգութեանց բանւորների հետ ընտրկութեան ընդհանուր շղթաներով, համագումարին իրենց ներկայացուցիչն ունէին: Դա՝ վարշաւցի որմնադրի Վլադիսլաւ Անելևսկին* էր:

Եւ հէնց յետևեալ տարւայ — 1890 թւի մայիսի մէկին Վարշաւայում չբանեցին մի քանի հազար լեհ բանւորներ:

Նրանից յետևեալ տարին (1891թ.) բանւորական տօնը արդէն տօնւեց Պէտերբուրգի բանւորների կողմից: Սակաւ ութիւ բանւորական խմբակները հաւաքւեցին գաղտնի ժողովի, որտեղ մայիսեան տօնի մեծ ու վսէմ նշանակութեան մասին չորս ճառ արտասանւեցին: Այդ ժամանակից սկսւած բանւորական տօնը դառնաւ ռուսական բանւորի ստացւածքը:

1892 թւին գաղտնի տօնախմբութիւնը կրկնւեց Պէտերբուրգում և միևնոյն եղանակով տօնւեց մի քանի ուրշ քաղաքներում ևս: Ռուսաստանի զանազան ծայրերում բռնկւում էին ազատ կայծերը բան-

* Անելևսկին վերջը տանջւեց ռուս կառավարութիւնից, որը 5 տարի բանտարկելուց յետոյ աքսորեց Սիբիր, որտեղ նա անմնասպանութեամբ վերջ տւեց իր կեանքին:

ւորական մեծ շարժման: Լեհաստանում այդ թւին նա վառ բոցով բռնկեց Վարշաւայում. Լոդզում մայիսի մէկին գործադուլ արին բոլոր գործարանները և մի քանի օրւայ ընթացքում մի քանի հազար բանւորներ չէին բանում! Կառավարութիւնը ուղարկեց կազակներ, բանւորական արիւնը տեղաց: Այդպէս տարէց տարի, մայիսի մէկը տօնւում էր բանւորի անընդհատ աճող խմբերից գաղտնի ժողովներով:

1896 թւին, առաջին անգամ Ռուսաստանում, տօնից առաջ յայտնւեց սոցիալդեմոկրատիքական կոչ,* որը հրաւիրում էր բոլոր բանւորներին մասնակցել տօնին: Դա Պէտերբուրգում էր և թռուցիկի տակ տորագրւած էր «Բանւոր դասի ազատութեան կռւի Միութեան» կողմից: Մի ամիս անց Պէտերբուրգի 35 հազար ջուլհակների բանւորական օրւայ համար մղւած 5 շաբաթ տևող գործադուլը ապացուցեց, որ Կռւի Միութեան խօսքերը պարարտ հողի վրայ են ընկել:

1897 թւին սոցիալդեմոկրատիքական մայիսեան թռուցիկներ արդէն շատ քաղաքներում յայտնւեցին:

1898 թւին մայիսեան տօնից մի քիչ առաջ զանազան քաղաքների սոցիալդեմոկրատիքական կազմակերպութիւնները միացան և կազմեցին մի "Ռուսաստանի Սոցիալդեմոկրատիական Բանւորական Կուսակցութիւն", որը և մայիսի մէկին ընդհանուր կոչ հրատարակեց:**

*) Լեհաստանում մայիսեան թերթիկներ յայտնւել են դեռևս 1890 թ.

**) Ահա մեր կուսակցութեան զարգացման համառօտ պատմութիւնը. 1898 թւին կայացաւ Պէտերբուրգի, Մոսկւայի, Կիևի և Եկատերինոսլաւի "Կռւի միութիւնների" և "Ռուսաստանի և Լեհաստանի Հրէայ բանւորների Միութեան" որը մի քանի կոմիտէներից է կազմւած (Վիլնայում, Կով-

1900 թուին առաջին անգամ յաջողուեց հարաւային քաղաքներից մէկում մայիսի 1-ին ընդհանուր գործադուլ կազմել. Խարկովում հազարից աւելի բանուորներ գործադադար արին և մի քանի ցոյցերով յայտարարեցին պրոլետարական պահանջները — 8 ժամեայ բանուորական օր և քաղաքական ազատութիւն։

1901 թուի մայիսեան օրերում բանուորական ցոյցեր և գործադուլներ տեղի ունեցան Պետերբուրգում, Վարշաւայում, Վիլնայում, Դվինսկում, Կիևում, Սիմֆերօպոլում, Կերչում, Թիֆլիսում և մի քանի այլ քաղաքներում։ Զմնաց համարեայ ոչ մի գործարանական կենտրոն, որտեղ այդ օրը չյայտնուէին մայիսեան թռուցիկներ, ուր պատրաստ կանգնած չլինէին զօրքեր, որտեղ ժանդարմները ցոյցը խանգարելու համար մի քանի տասնեակ անձանց ձեռբակալած չլինէին։ Պրոլետարիատական տօնը արդէն Ռուսաստանում դառնաւ բանուոր դասի բոլոր

նոյում, Վարշաւում, Լոդզում, Մինսկում, Բէլօստոկում, Գոմելում, Վիտեբսկում և այլն) ներկայացուցիչների համագումարը։ Համագումարը հրատարակեց իր մանիֆէստը և ընտրեց Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէտը։ Նուտով, սակայն, բազմաթիւ ձեռբակալութիւնները խանգարեցին կուսակցութեան կազմը և Կենտրոնական Կոմիտէտը հնարաւոր չեղաւ վերականգնել։ 1898 թուին կուսակցութեանը միացան Դոնի և Խարկովի կոմիտէտները։ 1900 թ. — Իվանո-Վոզնէսենսկի և Օդեսայինը, 1901 թուին — Նիժնի-Նովգորոդի, Սարատովի, Եարոսլաւլի, Կոստրոմայի, Թիֆլիսի, Բագուի, Նիկոլայևի, իսկ 1902 թուին — Տուլայի, Վլադիմիրի, Պոլտաւայի, Սամարայի, Պերմի, Բրեանսկի, Տուլայի, Կրեմենչուգի կոմիտէտները, ինչպէս և Սիբիրի Միութիւնը։ 1903 թուին կայացաւ կուսակցութեան IIրդ համագումարը — կազմուեցին Միջին-Ուրալեան, Ուֆայի, Ելիսաւետգրադի, Սմոլենսկի կոմիտէտները և հանքագործական բանուորների միութիւնը։ Նոյն թուին կազմուեց և Կովկասեան Միութիւնը.

թշնամիների համար ահեղ օր, բոլոր ճնշածների, ազատութիւն և լոյս պտրողների յոյսի օրը! Նաև առաւել ահեղ անցաւ մայիսեան տօնը յետևեալ 1902 թուին։ Վարշաւը և Վիլնոն, Կովնոն և Դրվինսկը, Պետերբուրգը և Նիժնին, Սարատովը և Ռոստովը, Եկատերինոսլաւը և Խարկովը, Սորմովոն և Բագուն վկաներ էին ցոյցերի և գործադուլների։ Ռուսաստանի բոլոր վայրերը ողողուած էին մայիսեան թերթիկներով։ Եւ ինքնակալ կառավարութիւնը իր բոլոր զինուորական և ոստիկանական ոյժերը լարեց, որպէս զի այդ տարի մի կերպ Ռ. Ս.-Դ. Բ. Կուսակցութեամբ ղեկավարուած բանուորական շարժման առաջն առնի։ 1903 թուին կազմակերպուած բանուորները առաւել ևս ուժեղ պատրաստուեցին իրենց տօնին։ Հարիւր հազար օրինակներով ամեն ուրէք տարածուեցին մայիսեան թերթիկները և կապիտալիստները ահուդողով սպասում էին մայիսի 1ին, իսկ կառավարութիւնը պատրաստեց իր զինուորական ոյժերը և բանտերը լցրեց "կասկածելի" մարդկանցով։ Մայիսեան ցոյցերը տեղի ունեցան Բագուում, Տոմսկում, Սորմովում, Թիֆլիսում, Ռոստովում (անյաջող). մի շարք ուրիշ քաղաքներ այդ օրը տօնեցին գործադուլներով (Սամարա, Կերչ, Գրոզնօ և այլն.)։ Տօնին աւելի լայն ծաւալ տալուն խանգարեցին հրէական ջարդեր առաջացնելու ոստիկանութեան ճիգերը։ Կազմակերպուած բանուորները զէնքը ձեռքին պաշտպանեցին ստիպուեցան իրենց հրէայ ընկերներին օրէնքի կեղծ "հսկիչների" բռնաբարութիւններից։ Սակայն, 2 ամիս անց, ամբողջ հարաւը, Բագուից սկսած մինչ Կիև բռնկուեց 150 հազար բանուորների ընդհանուր գործադուլով, որը միահմուռ կերպով սկսուեց աշխատանքի լաւագոյն պայմաններ տիրելու համար։

ՄԱՅԻՍԵԱՆ ՑՈՆԻ ԶՈՀԵՐՆ ՈՒ ՀԵՐՈՍՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ.

«Ձրի ոչինչ չէ տրւում, — ճակատագիրը քաւութեան զոհեր է պահանջում» ասել է ռուս բանաստեղծ Նեկրասովը և այդ խօսքերի ճշմարտութիւնը իր վրայ փորձեց Ռուսաստանի բանւորական մատաղ շարժումը։ Նրա ամեն մի քայլը գնուած է տանջանքների, արեան գնով։ Բայց և այնպէս բանւորական գործը յառաջ է գնում ու իր յաղթական ընթացքում նա առաջ է բերում իսկական հերոսներ՝ գիտակցաբար ու արի ընդառաջ գնացողներ բոլոր տանջանքներին, որոնց ժամանակակից կարգերը պատրաստում են ճնշուած ու տանջուած մարդկութեան գործի մարտիկների համար։

Միայն նրա համար, որպէս զի խանդարէ մայիսի 1ի տօնումը, ցարի կառավարութիւնն ամեն տարի գարնանը բանտերը լցնում է հարիւրաւոր բանւորներով և ինտիլիգենտ-սոցիալիստներով, արտաքսում է քաղաքներից «վտանգաւորներին», զրկելով նոցա այդպիսով վաստակից և դատապարտելով նոցա ու նոցա ընտանիքներին սովի։ Նագայկաներով, զոնդախներով ու սվիներով և նորից բանտերով ու աքսորներով նա զինաւորւում է մայիսեան ցոյցին մասնակցողների դէմ։

1900 թւի Խարկովի ցոյցի համար 53 բանւորներ — տեղական պրոլետարիատի համն ու հոտը — աքսորւեցան։ Ցետևեալ տարին մայիսեան օրերը արնահեղ էին։ Պէտերբուրգում սկզբում գործադադար յայտարարեցին Վիբորգեան քաղաքամասի բանւորները և շարժւեցին դէպ քաղաք ցոյցի, բայց դէմ առան զօրքի։ Տեղի ունեցաւ թունդ ճակատամարտ։ Ոստայնակ Իվան Պախոմիչը մեռած գետին փռւեց գոչելով. «Կեցցէ յեղափոխութիւնը!»։ Բանւորները յաղթուած էին, նոցանից հարիւրաւորները ձեռբակալւեցին և աքսորւեցին քաղաքից։ Բայց նոքա հոգով չնկճւեցին։ «Թէև մեզանից շատ շատերին վերցրին, գուցէ նոյն իսկ նոքա այլ ևս կենդանի չեն» — գրում է այդ դէպքերից անմիջապէս յետոյ մի բանւորուհի — «բայց և այնպէս մենք ամուր կանգնելու ենք։ Դուք ուշադրութիւն մի դարձնիք որ նորից գործի ելանք, այժմս այնպիսի ժամանակ է, որ գործադուլ անելու ոչ ոք հակառակ չի լինի. այժմս ամեն ոք աւելի է ուզում, ամեն ոք փողոց է ձգտում»։ Իսկ մի ուրիշ բանւոր գրում էր. — «Շատ շատերին մենք բարև մնաս չասենք, շատ շատերին կվերցնեն, շատ էլ սխալներ կանենք, բայց այսպիսի գործում այլ կերպ անկարելի է, մանաւանդ որ խոշոր գործ է սկսւում։ Սա վերջը չէ, այլ լոկ նախաբանը, բոցը սկսող հրդեհի և նրան կմարեն, բայց կրակը այնպէս պայծառ կլինի, որ նոյն իսկ կոյրերը կտեսնեն, թէ ում ինչ է հարկաւոր, ով է ում թշնամին, իսկ երկրորդ հրդեհի մարելու համար զինւորները այլ ևս չեն գընայ»։

Մի քանի օր անց գործադադար արին Պէտերբուրգի մօտիկ Օբուխովի գործարանի բանւորները և հերոսական ընդիմադրութիւն ցոյց տւին «խաղաղացնելու» ուղարկուած զօրքին։ «Մենք ազատութիւն ենք ցանկանում!» կոչով էին նոքա ամեն մի թիզ հող վերցնում և նահանջում հրացանների մի քանի որոտներից յետոյ։ Մի քանի մարդիկ սպանւեցան, մի քանի հարիւրը ձեռբակալւեցան և սարսափելի թակի ենթարկւեցան գազան-ոստիկաններից։ Իսկ վերջը՝ — դատ 30ից աւելի բանւորների վրայ։

Երմակովը և Գաւրիլովը, դատարանում իրենց արիսբար պահող՝ տաժանակիր աշխատանքի դնացին, մնացածները արեստանոսկի բոտները. 18 տարեկան Մարթա Եակովլևան, դատարանում աներկիւղ կերպով խոստովանելով, որ նա ընկերներին համակրելոր քարեր էր տալիս նոցա զինուորների դէմ կռուելով համար, դատապարտուեցաւ երեք ամեայ բանտարկելութեան:

1901 թւի Թիֆլիսի մայիսեան ցոյցարարներից մի քանի տասնեակները $1^1/_2$ տարի բանտարկուելուց վերջ անցեալ ամառ աքսոր դնացին:

1902 թւին կառավարութիւնը աւելի վայրագ վերաբերուեց դէպ բանտորները: Վիլնոյում ձեռբակալուած ցոյցարար-հրէյներին գեներալ-նահանգապէտ Ֆոն-Վալը մարմնական պատժի ենթարկեց: Ցարի գնդաների կատաղութիւնը կանգ չառաւ նոյն իսկ նոցա մարդկային արժանիքը անարգելու առաջ, որոնք մաքառում են համայն մարդկութեան լաւագոյն ապագայի համար:

Այդ քստմնելի արարքի պատասխանն էր Գերշ Հէկերտի գնդակը, որը փորձեց վռէժխնդիր լինել դահիճ Ֆոն-Վալին: Դահճին չնչին վերք հասցնելու համար Հէկերտը զինուորական դատարանի վրճռով կախաղան հանուեց:

Ցարի կառավարութիւնը իր թշնամիների համար վռէժխնդրութեան նոր միջոց հնարեց: Սարատովի, Նիժնի-Նովգորոդի և Սօրմովոյի մայիսեան ցոյցի մասնակցողներին նա ենթարկեց Դատարանական Պալատի չինովնիկների դատին: 37 մարդ, նոցա թւում 16 բանտորներ և 21 ինտիլիգէնտներ (այս վերջիններիս թւում 11 կանայք) մեղադրեալների աթոռի վրայ բազմեցան: Իրաւունքներից զրկումն և աքսոր Սիբիր բնակուելու համար — պատիժ, որը տրուում է ծանր քրէական յանցանքների համար — ահա թէ ցարի գեղդանները ինչին ենթարկեցին մեղադրուածներից մեծագոյն մասին. միւսները երկարատև բանտարկութեան դատապարտուեցին և միմիայն չնչին մասը արդարացաւ:

Բայց կառավարութեանը օգուտ չբերին դատարանական այդ կոմէդիաները, որոնց մէջ դատավրճիռները նախօրօք պատրաստուած էին մինիստրների կողմից! Դատարանական աթոռից ռուս սոցիալ-դեմոկրատները համարձակ և պերճ ճառով դիմեցին բոլոր ժողովրդին և պարզ կերպով բացատրեցին, թէ ինչ են նոքա ուզում և ինչի համար տանջուում: Իրենց հզօր թշնամիների աչքի առաջ նոքա յայտարարեցին իրենց նպատակները և պատրաստականութիւնը կռուել յանուն այդ նպատակի մինչև վերջ:

«Ես ամբողջ էութեամբս, — ասաց դատարանում սարատովցի 19 տարեկան բանտոր Գ. Վոյևոդինը — միացայ բողոքին ընդէմ գոյութիւն ունեցող քաղաքական և տնտեսական կարգերի, որոնց ժամանակ մենք, բանտորներս ստիպուած ենք ապրել կարիքի և խաւարի մէջ, շահագործուող կապիտալիստից և կախուած լինելով նոցա պաշտպան ցարի կառավարութիւնից... Իրենց դրութիւնը բարւոքելու, կապիտալիզմի անխիղճ շահագործման վերջ դնելու ամեն մի փորձի համար բանտորները խստիւ հետամուտ են լինում ցարի կառավարութիւնից: Բանտորներին ձեռբակալում են առանց որ և է հաստատ փաստերի, բանտարկում և ոյժով աքսորում այն տեղերից, որտեղ նոքա վաստակ ունեն, այն տեղ՝ որտեղ նոցա աշխատանքի կարիք չկայ, որտեղ նոքա սարսափելի զրկանքներ են կրում: Փորձելով իրենց վրայ անելք կարիքի բոլոր ծանրութիւնը, կարող են արդեօք բանտորները լռել? Ո՛չ և ոչ!...

Մենք բանուորներս անկարող ենք լռել, չենք կարող չբողոքել, չենք կարող չմաքառել մեր հարբեցողների, մեր ճնշիչների դէմ, չենք կարող չմոռանալ մեր վիճակի բարելաւման մասին: Իսկ մեր դրութիւնը կբարեփոխուի լոկ այն ժամանակ, երբ այժմեան հասարակական կազմը առմատապէս փոփոխութեան կենթարկուի, այսինքն՝ մէկ կողմից չեն լինի հարուստ տէրերը, միւս կողմից—չքաւորները, վարձկան բանուորները, երբ բոլոր գործարանները, արհեստանոցները, մէքենաները և հողը կպատկանեն ոչ թէ մի բուռն ոչինչ չանող պորտաբոյծ-կապիտալիստներին, այլ ամբողջ հասարակութեան—այն մարդկանց, որոնք աշխատում են... Իսկ այդպիսի արդարացի տնտեսական կարգեր ձեռք բերելը հնարաւոր է միմիայն այն դէպքում, երբ հասարակութիւնը կկառավարուի ոչ թէ մի ինքնակալ անձնաւորութիւնով, այլ ամբողջ ժողովրդից, նրա ընտրեալների միջոցով: Այլ խօսքերով՝ այդպիսի կարգերին հասնելու առաջին քայլը պէտք է լինի ինքնակալ կառավարութեան գահավիժումն և նրա փոխարէն ժողովրդական կառավարութեան հիմնումն„:

Համարձակ պատանին իր խօսքերի համար ցարի կառավարութիւնից $2^1/_2$ տարի բանտարկութիւն պարգև ստացաւ:

"Ես գիտէի- ասաց Սորմովոյի ցոյցի դրօշակակիր բանուոր Պ. Զօլօմովը,— որ ցոյցին մասնակցելու համար ինձ տաժանակիր աշխատանք է սպառնում: Պատիժը սարսափելի է, իմ աչքում նոյն իսկ աւելի վատ, քան մահը, որովհետև մարդկային անհատականութիւնը այնտեղ բոլորովին ոչնչացնում է և ամեն քայլափոխում անխղճաբար ստորացնում: Բայց այսուամենայնիւ, որ անձնազոհութեամբ ես գոնէ մի մարդչափ օգուտ կբերեմ իմ եղբայրներիս՝ ինձ բաւարարութիւն է տալիս այն բոլոր տանջանքների համար, որոնց ես արդէն կրեցի և կրելու եմ: Անձնական թշուառութիւնը, ինչպէս կաթիլը ծովում, խեղդւում է ժողովրդական մեծ ցաւի մէջ, որին օգնելու համար կարելի է ամբողջ հոգին տալ... Բանուորները, ստեղծելով հարստութիւնները և իրենց կրծքերով պաշտպանելով հասարակութեանը, արտաքին թշնամիներից, իրենց բոլոր ոյժերը տալիս են պետութեանը, բայց նոցա չէ տրուած ոչ մի իրաւունք, այնպէս որ, կապիտալ և բուռ խիղճ ունեցող ամեն ոք կարող է առանց աշխատանքի ապրելու հնարաւորութիւն չունեցողին ստրկացնել: Ես տեսայ, որ գոյութիւն ունեցող կարգերը ձեռնտու են լոկ փոքրամասնութեան— իշխող կառավարող դասակարգին: Որ մինչ ինքնակալութիւնը չփոխուի քաղաքական ազատութեամբ, ռուսական ժողովրդի յետագայ կուլտուրական զարգացումն անկարելի է: Որ բանուորները տէրերի դէմ մղած իրենց կռիւ ամեն մի քայլափոխում դէմ են առնում յանձին նոցա պաշտպանների՝ ինքնակալ կառավարութեանը: Որ ինքնակալութիւնը յայտնուում է ռուսական ժողովրդի թշնամին: Ահա թէ ինչու ես իմ դրօշակի վրայ գրեցի. կորչի ինքնակալութիւնը և թող կեցցէ քաղաքական ազատութիւնը!„

Եւ ահա թէ ինչու ռուսական ժողովրդի թշնամիները հերոս Զօլօմովին դատապարտեցին բոլոր իրաւունքների զրկման և բնակութեան համար Սիբիր աքսոր!

Նոցա նոքա դատապարտեցին, բայց Ռուսաստանի բոլոր աղնիւ մտածող քաղաքացիները արդարացին նոցա, ինչպէս իրենց ժողովրդի ազատութեան և երջանկութեան, կեանքի և պատի քաջարի մարտիկների! Եւ Սիբիրի ձիւներում, և խա-

ւար բանտերում Զօլօմովը, Վօյևոդինը ու նոցա ընկերները հպարտ կարող են բարձր պահել իրենց գլուխները, գիտակցելով, որ նոցա հետ է Ռուսաստանի արթնացած ողջ պրոլետարիատը, որ այդ կեանքի եկած պրոլետարիատը շարունակում է նոցա սկսած կռիւը և կհասցնի մինչ վերջը:

Մեզ, դեռ ևս կռւի դաշտում մնացածներիս, նոր այժ կոստ այդ՝ անհաւասար կռւում մեր զոհւած ընկերների օրինակը! Նոցա ձգած ուղիով մենք առաջ կգնանք, դէպ միևնոյն նպատակը, ոչ մի ըստառնալիքի, ոչ մի փորձանքի առաջ կանգ չառնելով! Համարձակ ու աներկիւղ ծածանենք մեր կարմիր, պրոլետարական վսէմ գործի նահատակների արեամբ ցողած դրոշակը և յանուն սոցիալիզմի համաշխարային բանւորական մեծ տօնին— մայիսի մէկին յայտարարենք.— կեցցէ 8 ժամեայ բանւորական օրը, կորչի ժամական զօրքը, կեցցէ բանւորների համաշխարային եղբայրական միութիւնը, կորչի ցարի կառավարութիւնը!

ՀՍԽՀ—ՍՍՀ
Մաշտոցի անվան

2013
<< Ազգային գրադարան >>
NL0039874
6788

«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ» Հայերէն Հրատարակ.

1. ԾԱՆՈՒՑՈՒՄՆ Ա-րդ Համաժողովի Մասին (Ծրագիրը, Կանոնագրութիւնը և Բ-րդ Համաժողովի որոշումները):
2. ՊՐՕԼԵՏԱՐԱԿԱՆ ՏՕՆԸ. Լ. Մարտովի
3. ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ } թերթիկներ.
4. ԲՈԼՈՐ ԲԱՆԻՈՐՆԵՐԻՆ }
5. ՄԱՑԻՍՏ ՄԷԿԸ (Թռուցիկ)

"ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ" Հայերէն Հրատարակ.

1. Նախապիտ Ծրագրի.
2. Սոցիալիզմի Էութիւնը
3. Ինչ պէտք է գիտնայ և յիշէ ամեն մի բանուոր?
4. Ինչպէս է Մենշեւ. հոգում բանուոր. մասին.
5. Պէտական կոնձարան.
6. Տրէդ-իունիոնիզմ և Սոցիալիզմ.
7. Աղէտ բարոզիչը.
8. Դենիսովի ճառը.
9. Ռուսատ. բազաբական կացմը և բանուոր.
10. Սարդեր և ճանճեր.
11. Մայիսի մէկը.
12. Բանուորական օր.
13. Արդելած թերթիկներ.
14. Գոլդբլատի ճառը.
15. "Պրոլետարիատի Կռիւը" (№ 1—3)
16. "Պրոլետարիատի Կռուի թերթիկը" №1—6